МИНИСТЕРСТВО ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ И ИНФРАСТРУКТУР РА

ЗАО "ЕРЕВАНСКАЯ ТЭЦ"

MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION AND INFRASTRUCTURES OF RA

"YEREVAN TPC" CJSC

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ» ՓԲԸ

ՀՀ, ք. Երևան 0053, Արին-Բերդ 3-րդ նրբ, թիվ 3
0053 РА, Ереван, ул. Арин-Берд 3, пер. 3
3 Arin-Berd str, Imp. 3, 0053 Yerevan, RA

հեռ.՝ +374 11 472 760
ֆաքս՝ +374 11 472 771
էլ. փոստ՝ mailbox@ytpc.am

No 77/20
20.02 2020թ.

«Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ-ի

Տնօրեն Ռ. Վարդանովային

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/131 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում, 06.11.2019թ-ին «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ Գնորդ) և «Բլոքչեյնհոսթ» ՍՊԸ-ի (այսուհետ Վաճառող) միջև կնքվել է թիվ ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/131-1 ապրանքների(անջատիչների և կառավարվող սարքի) մատակարարման պայմանագիր: Մատակարարումը Վաճառողը պետք է կատարեր համաձայն պայմանագրի Հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագրի և ժամանակացույցի, այն է 03.12.2019թ:

Սակայն սույն ծանուցման օրվա դրությամբ Վաճառողը չի կատարել իր ստանձնած պարտականությունը և չի մատակարարել Գնորդին պայմանագրի Հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագրում նշված ապրանքները:

Ըստ Պայմանագրի 2.1.7 կետի՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողը էականորեն խախտել է պայմանագիրը, ընդ որում պայմանագիրը էականորեն խախտված է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետը խախտվել է 10 օրից ավել:

Հաշվի առնելով վերոգրյալը, Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը: ՀՀ կառավարության 2017 թ-ի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 33-րդ կետի 17-րդ ենթակետի և պայմանագրի 2.1.7 ենթակետի և 8.11 կետի, Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանացումը պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Վաճառողի տվյալները ներկայացնելու է լիազոր մարմին:

Գնորդը Վաճառողի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի մասին համաձայնագիրը և նրան կից վճարման պահանջագիրը, սահմանված կարգով կներկայացնի համապատասխան բանկին՝ տուժանքի համաձայնագրով սահմանված գումարը Գնորդի Արդշինբանկ ՓԲԸ-ի Շենգավիթ մասնաճյուղի 2473600002170010 հաշվեհամարին փոխանցելելու նպատակով:

Գլխավոր տնօրեն Ս. Խաչատրյան

Կատարող՝ Տ. Լաճիկյան
Հեռ 091 88-33-88
14.02.2020թ